ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2026թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 482-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշման 1-ին կետի 18.2-րդ ենթակետից հետո լրացնել նոր 18.3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.3) Երևան քաղաքի վարչական տարածքում 2000 և ավելի անհատական բնակելի տներ, առանձնատներ, այգետնակներ (ամառանոցներ) ունեցող տարածքների (թաղամասերի) համար նոր կառուցվող գազասպառման համակարգի ստեղծման դեպքում ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա կամ ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի Ն 482-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

«1. Արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

3. Տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը:»:

Երևան քաղաքում առկա են ավելի քան 2000 շենքեր, շինություններ (անհատական բնակելի տուն (առանձնատուն), այգետնակ (ամառանոց)) ունեցող տարածքներ (թաղամաս), որտեղ առկա չեն գազասպառման համակարգեր, և այս իրողությամբ թելադրված մարդկանց լիարժեք կենսագործունեության տեսանկյունից կենսական անհրաժեշտություն է դարձել այդ տարածքները ինժեներական ենթակառուցվածքներով ապահովելու խնդիրը:

Վերոնշված տարածքներում ջեռուցումն որպես կանոն իրականացվում է մետաղյա վառարաններով՝ վառելափայտի միջոցով կամ էլեկտրական ջեռուցիչների և տաքացուցիչների միջոցով: Գազամատակարարման առկայության դեպքում ջեռուցումը կդառնա ավելի մատչելի և անվտանգ, կապահովվի օբյեկտների շահագործման հուսալիությունը և անվտանգությունը, ինչպես նաև բնակիչներին հնարավորություն կընձեռվի վարել ջերմոցային փոքր տնտեսություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ծրագրի սոցիալական ուղղվածությունը՝ անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ կատարել լրացում՝ սահմանելով, որ Երևան քաղաքի վարչական տարածքում 2000 և ավելի անհատական բնակելի տներ, առանձնատներ, այգետնակներ (ամառանոցներ) ունեցող տարածքների (թաղամասերի) համար նոր կառուցվող գազասպառման համակարգի ստեղծման դեպքում ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա կամ ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ